ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հուլիսի 2023 թվականի №---Ա
ք. Երևան

«ԷՆԵՐՋԻ ՍՓՓԼԱՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի մայիսի 26-ի գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող՝ Արա Արտաշեսի Կիրակոսյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասի՝ Վանիկ Կարապետի Սաֆարյանին օտարման գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը, իսկ 2023 թվականի հուլիսի 13-ի գրությամբ ներկայացրել է 2022 թվականի հունիսի 20-ին կնքված Արա Արտաշեսի Կիրակոսյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասի՝ Վանիկ Կարապետի Սաֆարյանին օտարման վերաբերյալ համապատասխան պայմանագրի պատճենը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2023 թվականի հունիսի 15-ի №ԳԲ/34.1-Մ4-1/1988-2023 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ Կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 10-ի №02/12.4/23622-2023 գրությամբ Հանձնաժողով են ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումները՝ Գործարքի մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված՝ Գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը բացակայում են: Պարզվել է նաև, որ Գործարքը Ընկերության կողմից արդեն իսկ կնքվել է 2022 թվականի հունիսի 20-ին՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի խախտմամբ՝ առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության, ինչով պայմանավորված օրենքի ուժով այն առ ոչինչ է: Միաժամանակ, մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման ընդունումը Ընկերությունը վերացրել է նշված խախտումը՝ ներկայացնելով համապատասխան հայտն ու բաժնեմասի օտարման վերաբերյալ պայմանագիրը, և խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, առկա չէ խախտման կատարման կրկնակիություն և Ընկերությունը նախկինում նման խախտում թույլ չի տվել, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող՝ Արա Արտաշեսի Կիրակոսյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասի՝ Վանիկ Կարապետի Սաֆարյանին օտարման գործարքին:
2. Ընդունել ի գիտություն, որ 2022 թվականի հունիսի 20-ին կնքված՝ Արա Արտաշեսի Կիրակոսյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասի՝ Վանիկ Կարապետի Սաֆարյանին օտարման վերաբերյալ գործարքը կնքման պահից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առ ոչինչ է:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական

դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2023թ.